

**ԱՆԿՏՐԻԼ ԽԻԱՐԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու  
բարբառ (խոսվածք)**

Ըլըմ ա, չլըմ մի թուրքի թաթ: Դա բոստանչի ա ըլըմ: Դա էդ բոստանըմն ունենըմ ա մի վենձ  
խիար: Ով էդ խիարն առնող ա գնըմ, դա տալիս չի:

Ասըմ են.— Խի՞ չես տալի:

Ասըմ ա.— Չե՛մ տալի:

Հեղով մի թաքավորի տղա ա ըլըմ, ասըմ ա.— Նրա հերն եմ անիծել, եփ որ չի տալի, հլա ես  
գնամ, տեհեք ոնց ա տալի:

Թաքավորի տղեն հեղով իրա գորքով գնըմ ա, թաթին վախացնըմ, ձենը կտրելու հմար էլ  
փողով կաշառըմ ա, աչկերը կապըմ, էդ խիարը առնըմ ա:

Էդ խիարը վերչը դա տալիս ա իրան ու ասըմ.— Այ տղա, էդ խիարը կդնես փեշիդ տակին,  
կգնաս, ինչքան եղևիցդ ձեն-ձուն կտան, եդ չի մտիկ անես, որ շատ հնարներուն կկտրի հա,  
կբերեն գուռնա դիող կածեն, որ ըռավողը մի կերպ էդ մտիկ անես, հմա էդ չի մտիկ անես:

Հեղով էդ տղեն էդ խիարը հետը գնում ա: Ինչքան դրա եղևուց ձեն են տալի, գուռնա-դիող են  
ածըմ, դա էդ չի մտիկ անըմ: Դա գնըմ ա հասնըմ մի ծմակ, տենըմ ա մի մենձ չինարի ծառ,  
ծառի տակին էլ մի սառն ախպիր: Դրանք նստըմ են էդ ծառի տակին, ուտըմ են, խմըմ են,  
դինջանըմ են, որ էդ ճամփա ընգնին:

Հեղով էդ տղեն մտածըմ ա էլի, ասըմ ա.— Էս խիարը հլա էս ծառի տակին կտրեմ, տենամ հլա  
էս խիարըմն ինչ կա, որ ալամ աշխարքն էս խիարն ուզեց, էս թաթը տվուց ոչ:

Հեղով կտրըմ ա, տենըմ ա հրես ոսկի մագավոր մի սիրուն ախչիկ էս խիարի միջին: Դրանք  
փթաթորվըմ են իրար:

Հեղով էդ տղեն էս ախչիկանն ասըմ ա.— Ես էտա մի հնարով իմ մուրազին հասա, հմա քեզ  
սհե անթադարիք ու անշոր իմ հոր տուն չեմ տանիլ, ամոթ ա, ըստի դուն էս ծառին վեր իլ,  
կացի, էս գնամ տունն իմաց անեմ, թղարիքով, գուռնադիողով գամ քի տանիմ:

Հեղով էդ ախչիկն էդ չինարի ծառին վեր ա ըլըմ, էդ տղեն դրան ըտի թողըմ ա, գնըմ: Հեղով մի  
պառավ կնիկ գալիս ա, որ ախպրիցը ջուր տանի, կուժը շլակիցը կապած: Էդ պառավ կնիկը  
տենըմ ա, որ մի իսանաթի շվաք ա ըրեվըմ ախպրի միջին: Դես ա մտիկ անըմ, տենըմ ա, որ  
հրես մի սիրուն ախչիկ չինարըքու վրա նստած ա:

Ասըմ ա.— Բալիկ ջա՛ն, դվեր արի տենամ էդ ով էս:

Ասըմ ա.— Չե՛, նանի ջա՛ն, էս վեր չեմ գալ:

Ասըմ ա.— Բալիկ ջա՛ն, դե տեղ տուր էս էլ գամ ըտի էլի՞:

Ասըմ ա.— Չե՛, նանի ջա՛ն, սա քու տեղը չի:

Վերչն էդ պառավն անգաճ չի դնըմ, ծառը կրկրծորելով, ճըպապորելով, պատիպատն անելով  
էդ ըխչկա կուշտն ա հասնըմ:

Հասնըմ ա կուշտն ու ասըմ.— Ախչիկ ջան, ընչի՞ էս էկել ըստի, էս ի՞նչ բան ա, որ էս ծմակըմը  
մենակ էս:

Ասըմ ա.— Եսի՞մ, նանի ջա՛ն, էկել եմ էլի:

Եղևա էդ պառավը էդ ըխչկա վրա մի աղոթքն ա ասըմ, էդ ախչիկը դուշ ա դառնըմ, ինքն էն  
ըխչկա տեղը նստըմ ա, մնըմ: Էդ ախչիկը որ դուշ ա դառնըմ հա, մտիկ ա անըմ տենըմ, որ  
թաքավորի տղեն հրես գուռնով-դիողով գալիս ա: Պատավն էլ հլա դեռ ծառի վրա ա:

Հեղով էս դուշը թռչըմ ա, գնըմ թաքավորի տղի ուսին կանգնըմ: Թաքավորի տղեն էլ վեր ա  
ունըմ էս հնգորը թավազա անըմ, էն հնգորը թավազա անըմ, հմա էդ դուշը ոչ մնի ափին էլա  
կենըմ չի, թեպոհն-թեպոհն ա անըմ, ձեններուցը փախչըմ, էդ գնըմ ա թաքավորի տղի ուսին

վեր գալի, էլ եղ թաքավորի տղեն վրա ա ունըմ ուրըջի տալի, հմա էլ եղ կենըմ չի, գալիս ա իրա ուսին վեր գալի, կաղնըմ:

Թաքավորի տղեն որ շատ տենըմ ա տհե արավ հա, ջիգըրը գալիս ա, դրա ոտներիցը բոնըմ ա ու եղ նաչար դժի շլինքը կտորըմ, վրա ա անըմ: Հետո էղ կտրած շլինքն ընկնըմ ա մի բաղի մեջ: Էղ բաղըմը դուս ա գալի մի շահի թթենի, էնքան բոյ ա քշըմ, որ տան գլուխն ա հասնըմ:

Հեղով էղ բաղատերը գալիս ա թթենին կտորըմ, ասըմ ա.— Տանըս շվաք ա անըմ:

Դրանից մի շըրեփաչափ փետի կտոր կտրելիս՝ քեղը թոչըմ ա ընգնըմ մի ախկատ պառավի կտրովը տուն, դառնըմ ա մի սիրուն շերեփ, մտնըմ գդալամանի մեջը: Էղ պառավն էլ մի հատ մինուճար տղա ա ունենըմ, ուրիշ տեղ ըշխատելիս ա ըլըմ, Թիվլիզ ա ըլըմ, թե Բաքու, էլ էղքան գիղեմ ոչ: Հեղով էղ շերեփը դառնըմ ա մի սիրուն հարսը: Ամեն օր պառավը տանիցը դուս ա ըլըմ թե չէ, դա դուս ա գալի տուն ու դուռը թամուզ ավըմ ա, հվաքըմ, էղ գնըմ գդալամանը մտնըմ, դառնըմ շերեփ: Էղ պառավը հեղով գալիս ա ավլած, թամզած տենըմ, մնըմ ա գարմացած:

Գնըմ ա հրևանների կնանոնցն ասըմ ա, թե.— Ա՛յ կնանիք, սհեսհե, մի բախտի մեչ եմ ընգել, գիղեմ ոչ սա ինչ բան ա:

Ասըմ են.— Ա՛յ պառավ, բուսու պահի, հլա տես էղ ինչ բան ա էլի՞:

Հեղով էղ պառավը բուսու ա պհըմ, տենըմ ա, որ էս հարսը գդալամանիցը դուս էկավ, տներն ավլեց, թամզեց, ամեն բանն իրա տեղը գրեց: Հենց որ պրծնըմ ա, ուզում ա էղ գդալամանը մտնի, էղ պառավը գնըմ ա պինդ փեշերիցը բոնըմ:

Ասըմ ա.— Նանի ջա՛ն, չէ՛, չէ՛, թող արա գնամ, թո՛ղ արա:

Ասըմ ա.— Չէ բալիկ ջան, էս հլե քեզ նման մի հարսի եմ ման գալի:

Հեղով էղ հարսը աշկար ա ըլըմ: Աշկար ըլելուց եղը էղ պառավը նամակ ա գրըմ տղի վրա, որ գա: Տղեն գալիս ա, հարսն ըմանչըմ ա, տապ ա անըմ:

Հեղով էղ պառավը տղին ասըմ ա.— Բալա ջա՛ն, մի բան ասեմ, ինձ անզաճ արա, մսխարա չանես:

Ասըմ ա.— Ասա՛, նանի ջա՛ն:

Ասըմ ա.— Դու չկել է՞փ տիս ազափ կենալ, էս հրես մի ոտըս գերեզմանըմն եմ դրել, հմա դու ուզըմ չես ինձ ուրախացնես, հարսը բերես տուն:

Ասըմ ա.— Նանի ջա՛ն, դե դուն ինձ հմար մի ըխչկա տեղ արա, էս էլ ուզեմ:

Ասըմ ա.— Բալա ջա՛ն, սհե՛-սհե՛, ըրմանաս ոչ, մի սիրուն հարսը իրա ոտով մեր տուն ա էկել: Ես տանիցը դուս ըլելի, գեյի, տենայի տունն ավլած, թամրզած, խորակն ու չայն էփած: Ես բան չի գլխի ըլելի, հրեվաննին ասին՝ բուսու պհե: Ես էլ բուսու պհեցի, տեհա, որ սհե-սհե, մի հարսը գդալամանիցը դուս էկավ, ամեն բանն էլ արավ, էղ ուզեր նի մտնի— բոնեցի: Հմի հազիր էն հարսն ա, էլ ուրիշ ախչկա չի ման գանք, արի նրան ուզի:

Ասըմ ա.— Նանի՛, նա մի դարդ կունենա մեզ բուրթա կլի արած, իրան տերը կունենա, մեխկ ա, թող կենա, իրան արևին ձեն աճե:

Ասըմ ա.— Դե դու գիղես, բալա ջա՛ն:

Ախչըկանը կանչըմ ա, ասըմ ա.— Ես քիր չունեմ, ինձ քիր կլի՞ս:

Ասըմ ա.— Ես էլ ախպեր չունիմ, էս քեզ՝ քիր, դուն էլ ինձ՝ ախպեր:

Պառավն ասըմ ա.— Դե էս էլ ձեր մերը, բալենի ջան: Էղ տղեն քվորը պահ ա տալի մորը, ինքը գնըմ իրա գործին:

Ձեն տանք թաքավորի տղիցը: Նա ախչկան ծառի վրա թողուց, գնաց, որ պատրաստութիւն տենա, գուռնա-դիողով գա կնգանը տանի: Էկավ տեհավ իրա կնիկը մի պառավ ա, տարավ իրան կնիկ:

Մի օր էլ թաքավորը հրաման ա տալի, որ տունը մինը, ամեն գեղըմը, թաքավորիցը մի ձի պահեն: Մինն էլ բերըմ են էդ պառավին տալի:

Պառավն ասըմ ա.— Բալա ջա՛ն, ախր ես պառավ եմ, ուժ չունեմ, ո՞նց պահեմ:

Ասըմ են՝ թաքավորի հրաման ա, ոնց ուզըմ ես պահի:

Եղնա էն ախչիկը դուս ա գալի, թաքուն մտիկ ա անըմ, տենըմ ա՝ սա էս ձին ա, որ թաքավորի տղեն առաչի անքամ վեր էլած էկավ, իրան թաթիցն առավ, բերուց ախպրի գլխին թողուց: Ձին թողըմ են գնըմ:

Ասըմ ա.— Ա՛յ ձի, ես քեզ կորմը չտիմ տալ, իմ գլուխը կլվանամ, գլխիս ջուրը տակդ կածեմ, տակիդ մամուռ դուս կգա, կուտես կքոքանաս:

Ըղորթ որ՝ էնքան քոքանըմ ա, էլ ասելու ոչ: Եղո իմանըմ ա, որ թաքավորը ձիանը հվաքըմ ա:

Գնըմ ա գոմը ձիուն ասըմ ա.— Կգան քեզ տանելու, հմա չկելը ես գամ ոչ, ասեմ— վեր կաց տեղիցդ.— վրիցդ օխտը գոլ կաշի էլ պոկեն, վեր չկենաս:

Գալիս են ձին տանելու, ինչքան պլետըմ են, տեղիցը ժած չի գալիս:

Ասըմ են.— Ա՛յ պառավ, էս ի՞նչ բան ա, էնքան քոքացրել ես, տրաքըմ ա:

Ասըմ ա.— Բալա ջա՛ն, ես չեմ պիտի, ախչիկս ա պիտի:

Ասըմ են.— Դե՛ գնա ասա՛ գա վի կացնե:

Պառավը գնըմ ա կանչըմ:

Գալիս ա ասըմ.— Է՛յ նամարդ, նամարդի օղլան, շատ էլ քու տերն ա նամարդ, դո՞ւ խի ես նամարդուդին անըմ, վեր կաց տեղիցդ:

Ասելու հաղաղ ձին տեղիցը ծուլ ա ըլըմ: Թաքավորի տղեն էլ ըտի ա ըլըմ, որ էդ բանը տենըմ ա, հուշտ ա ըլըմ, համ էլ իրան օրըմը էդ թավուր սիրուն հարսը տեհած չի ըլըմ ու շատ նման ա տալի իր կտրած խիարին, հմա դե՛ ի՞նչ կարա ասե:

Ձին տանըմ ա, հմա դաթար չունի, ուզըմ ա էդ ախչկան տենա: Բերըմ ա մի միանա ա սարքըմ, հրաման ա տալի, որ. «Գեղովի, տունը մինը բուրթ գգելու մուշա տիք տալ թաքավորի հմար»:

Գալիս են բուրթը գզըմ են, էդ ախչիկն էլ պառավի տան կոնուցն ա գնըմ:

Հեղով էդ թաքավորի տղեն ասըմ ա.— Այ իմ մշակնի ջան, ամենքդ ձեր մշականեն ուզեցեք— գնամ առնեմ, բերեմ:

Մինն ասըմ ա.— Ես շալ եմ ուզըմ: Մինն էլ ասըմ ա.— Ես շալովնի եմ ուզըմ: Վերջն ամեքը մի բան են ուզըմ:

Հերթը գալիս ա հասնըմ էդ ախչկանը, ասըմ ա.— Ինձ հմար էլ մի նուռը կբերես, մի տիկնիկ, մին էլ մի ածըլի:

Թաքավորի տղեն գնըմ ա չիմնու ասածնին էլ առնըմ, բերըմ տալի, եղո էդ ըխչկա եղնուց բոլտու ա պիտի, տենա հլա դրանք տանիլ տի ի՞նչ անե: Էդ ախչիկը հեղով գալիս ա ճամփուցը դուս գալի, գնըմ ա մի մասըրքոլ տակի նստըմ, տղեն էլ մասըրքու տակին տապ ա անըմ:

Ախչիկն ասըմ ա.— Այ նուռը, ես իմ դարդերն ասեմ՝ դու թիքա-թիքա իլ, այ ածըլի, ես իմ դարդերն ասեմ՝ դու սրվի, այ տիկնիկ, ես իմ դարդերն ասեմ՝ դու պար արի:

Եղո դարդերը կենտ-կենտ ասըմ ա, թե ոնց ա խիար էլել, թաքավորի տղեն առել ա, դեռ տուն չհասած, ճամփին կտրել ա, ինքն ախչիկ ա դառել, թաքավորի տղեն ծառի վրա թողել ա, պառավն էկել ա աղոթքն արել՝ դուռ ա շինել, թաքավորի տղեն ճիտը պոկել ու դեն գձել, ինքը թթնի ա դառել, կտրել են, ինքը գդալ ա դառել, փլան պառավը բռնել ա, ուզեցել ա իրա հարսը շինե, հմա տղեն հսկացել ա, որ ինքը բուրթ ա արել իրանց, իրան քիր ա ասել ու պահ տվել մորը...

Ձիմ որ ասըմ ա, նուռը թիքա-թիքա ա ըլըմ, ածըլին սրվըմ ա. տիկնիկն էլ պար ա գալի, ասելուց եղն ուզըմ ա իրան ածըլով սպանի— տղեն քմակիցը ձեռը բռնըմ ա, փթաթվըմ են:

Թաքավորի տղեն տանում ա իրանց տուն, էն պառավին կապում են դաթրի պոչիցը, քաշ տալով սպանում, հեղով իրանք թագա հրսանիք են ըլլմ, հասնում են իրանց մուրազին, տհենց էլ ամեն ջահել հասնի իրա մուրազին: